Թ.

Ծառ արմաւենի ես դուն որ ի վեր գնացեր քան ըզհեղ,
Քո հաւ սիրամարգդ եմ ես, գամ շինեմ ի քեզ տուն եւ տեղ.
Առնում ի սարերդ ելնում ու ծաղիկ քաղեմ սիրու դեղ,
Թռնունք իմ շինուածք իջնունք՝ աւիրեմք շատոց տուն ու տեղ:

Ժ.

Ծառայ քո դընչին մեռնիմ որ ճերմակ է զէտ կարագ եղ.
Երեսդ է կարմիր զէտ վարդ, պըռունկներդ է պագնելու տեղ.
Օնքերդ ես ի վեր քաշել ի վըրայ բերել զէտ անեղ.
Աչուերդ է ի ծով նըման որ հազար ձուկըն կայ ի լեղ:

ԺԱ.

Ա՛յ իմ աղբերաց արուն, որ բուսար ի մէջ քարերուն,
Աչուիդ ի նարկիզ նըման, մէկն ի քուն ու մէկն ի զարթուն:
Վախեմ թէ ըզքեզ որսաց ու զրկեն զիս ի քո տեսուն.
Առանց քեզ ես ո՞նց ապրիմ կամ տանի իմ աչերըս քուն:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ես ան հաւերուն էի որ գետինն ի կուտ չուտէի,
Թռչ՛ի երկնօքըն երթ՛ի, թէ սիրոյ ակնատ չընկնէի.
Ակնատն ի ծովուն միջին էր լարած ՛ւ ես չըգիտէի.
Ամէն հաւ ոտօքն ընկեր, ես ոտօք ու թեւս աւելի:

Բ.

Ամուր եմ քարիդ նըման որ մրճիկն ի յիս չիբանի.
Բարձր եմ թուխ ամպիդ նըման որ ոչ ով յիս չիհասնի.
Աղեղն եզնենի լինի ու լարն ի վերայ գալենի,
Քաշողն քաջորդի լինի, հապայ թէ իմ սիրուն հասնի:

Գ.

Խնծորն ի ծառին ճըղին, ի ճըղին ներքեւ տերեւին.
Հընցկուն իմ եարին ծըծերն ի ծոցին՝ ներքեւ շըմաթին.
Արեգակն ի ջուր իջել, լուսնեկան ու կուժն ի յուսին.
Նա քալէր՝ ճօճկըտար միջին, լօք ելնէր շամամն ի ծոցին: